ԳՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԲԱՇԽՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ա.Շ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հասարակական ամբողջական արդյունքի բաշխումը, որպես հասարակական հարաբերությունների առանձնահատուկ ձև, բացի ֆինանսներից, իրագործվում է նաև տնտեսական այլ կատեգորիաների միջոցով, ինչպիսիք են՝ առևտուրը, գինը, աշխատավարձը, վարկը և այլն: Բաշխման նշված ձևերը իրենց էությամբ, առանձնահատկություններով և բնույթով միմյանցից տարբեր են, և դրանցից ոչ մեկը ֆինանսական չէ, սակայն գործունեության հիմքում ունենալով նույն ապրանքափողային հարաբերությունները և հասարակական ամբողջական արդյունքի համընդհանուր բաշխման ֆունկցիաները, սերտորեն փոխկապված են և նպաստում են ֆինանսական հարաբերությունների իրագործմանն ու զարգացմանը: Բացի այդ, արդյունքի հասարակական բաշխման բոլոր ձևերն իրագործվում են փողի միջոցով, դրա ակտիվ միջնորդությամբ, որտեղ այն կատարում է ինչպես արժեքի չափի, այնպես էլ շրջանառության միջոցի և վճարելամիջոցի ֆունկցիա:

Արդյունքի բաշխման ֆինանսական վերոհիշյալ ձևերի փոխադարձ կապի և փոխներգործության ուսումնասիրությունը, դրանց համատեղ ու նպատակամետ գործունեության արդյունավետության բարձրացումը կարևոր նշանակություն ունեն հատկապես ներկա պայմաններում, երբ երկրի սեփականության ձևերի փոփոխությունը մի կողմից հանգեցրեց շուկայական տնտեսության զարգացման, մյուս կողմից՝ հասարակական հարստության, և զուտ եկամտի գիտականորեն չհաշվարկված բաշխումն ու վերաբաշխումը պարարտ պայմաններ ստեղծեցին տնտեսության քայքայման և հասարակական, սոցիալական ու քաղաքական ճգնաժամի խորացման համար:

Արդյունքի բաշխման վերոհիշյալ ձևերի, ֆինանսական հարաբերությունների և տնտեսության զարգացման ներկա փուլում մեծ է գնի դերը: Այն որպես միավոր, արժեքի փոխակերպված ձև ունի նույն կառուցվածքը, ինչպիսին է հասարակական ամբողջական արդյունքը (ՀԱԱ) և ի տարբերություն բաշխման մյուս ձևերի, որպես միավոր արդյունքի բաշխման առանձնահատուկ ձև՝ ավելի անմիջականորեն է փոխկապված ֆինանսների հետ: Ինչպես արտադրություն – սպառում փուլերում, այնպես էլ ֆինանսական հարաբերությունների ընթացքում գինը արտացոլում է արդյունքի շարժման և՛ քանակական, և՛ արժեքային կողմը: Այն իր վրա է կրում հասարակական արդյունքի արժեքային ձևը՝ սկսած արտադրության գործընթացից, նրա արժեքային ձևի և մեծության փոփոխությունից մինչև շուկայական հարաբերություններով և պետության գործոնով պայմանավորված ապրանքների գների ձևավորումը և գների միջոցով արդյունքի բաշխումը: Գների միջոցով արդյունքի բաշխումը նախ ենթադրում է բաշխում նրանում պարունակվող տարբեր տարրերի միջև: Գների մեջ տարբեր տարրերի առանձնացումը և դրանց բաշխումը տնտեսավարող սուբյեկտների, պետության

ե. հասարակության միջև հիմք են ֆինանսների ձևավորման և ֆինանսական հարաբերությունների զարգացման համար: Հետևաբար, բաշխման կառուցվածքում դրանց ուղղությունների, համամասնությունների, արտադրության և իրացման ընթացքում կատարված ծախսումների ու զուտ եկամտի մեծությունների սահմանների ճիշտ որոշումը կարևոր նշանակություն ունի ինչպես ֆինանսների, այնպես էլ պարզ և ընդլայնված վերարտադրության համար:

Եթե սոցիալիզմի պայմաններում, գնագոյացումը կրում էր արհեստական բնույթ, իսկ շատ դեպքերում, կարգավորվում էր նույնիսկ քաղաքական նկատառումներով և իր մեծությամբ ու կառուցվածքով չէր արտացոլում և փոխհատուցում արժեքի մեջ մարմնացած նյութական, աշխատանքային ծախսումները և հասարակական հարաբերությունների մեջ հիմնականում կատարում էր արդյունքի քանակական բաշխման դեր, ապա շուկայական հարաբերությունների պայմաններում դինը, որպես հասարակական ծախսումների և զուտ եկամտի դրսևորման ձև, հիմք է արդյունքի արժեքային բաշխման և ֆինանսական հարաբերությունների զարգացման համար: Դրա մասին է վկայում ԽՍՀՄ-ում արժեքից ցածր գների կիրառման հետևանքով մի շարք ճյուղերի և առանձին ապրանքատեսակների վնասաբերությունը, որը փոխհատուցվում էր բյուջեի հաշվին, և ներկա շուկայական տնտեսության պայմաններում ձևավորվող գները, որոնք ապահովում են ոչ միայն ապրանքի արտադրության և իրացման հետ կապված ծախսումների փոխհատուցումը և դրանով պայմանավորված պարզ վերարտադրությունը, այլև իրենց եկամտաբերությամբ նախապայման են ֆինանսների ձևավորման և ընդլայնված վերարտադրության համար: Հետևաբար, ֆինանսների, շուկայի և գների փոխադարձ կապը, դրանցում գործող մեխանիզմների փոխկապակցվածությունը, ինչպես նաև արդյունքի բաշխման ընթացքում դրանց սահմանների ճիշտ կանխատեսումը կարևոր նշանակություն ունեն հատկապես ներկա տնտեսության և պետության կայունացման, ղեկավարման, շուկայական հարաբերությունների ձևավորման գործընթացում, երբ արդյունքի բաշխումը, որպես հասարակական հարաբերությունների տարբերային կարգավորիչ, հիմք է նոր տնտեսակարգի ձևավորման, ապակենտրոնացված և կենտրոնացված փողային ֆոնդերի ստեղծման, ընդլայնված վերարտադրության, պետության, տնտեսության ու հասարակության, եթե ոչ համամասնական, գոնե բացարձակ զարգացման համար:

Ֆինանսական հարաբերությունների ելակետային փուլը արդյունքի սկզբնական բաշխումն է: Այն կատարվում է գների միջոցով, դրա ձևավորման հաջորդականությամբ, որտեղ մեծ է պետության և նրա կողմից ստեղծված ֆինանսական մեխանիզմների դերը:

Գների կառուցվածքում հիմնական խմբերը երեքն են. նյութական ծախսեր՝ C, աշխատանքային ծախսումներ՝ V և զուտ եկամուտ՝ M: Դրանց ամբողջությունը շուկայական հարաբերությունների ընթացքում հանդես է գալիս իրացման գնի ձևով: Գների առաջին երկու խմբերը՝ C+V, պարզ վերարտադրության, իսկ երրորդը՝ M-ը, ընդլայնված վերարտադրության հիմք են:

Ֆինանսների և գների փոխադարձ կապն առավել պարզ արտացոլելու համար վերլուծենք ՀՀ-ում գործող մի քանի ապրանքատեսակների միջին գների կառուցվածքը (աղյուսակ I), որը հնարավորություն կտա գործնականորեն ցույց

տալ ֆինանսների և գների փոխադարձ կապն ու փոխներգործությունը՝ արդյունքի ձևավորման և բաշխման գործում:

Աղյուսակ I

Իրացման գների կառուցվածքն ըստ խմբերի և տարրերի	Ապրանքատեսակներ							
	տավարի միս		ծխախոտ		կոշիկ		էլեկտրա-էներգիա	
	մեկ կգ-դրամ	% գնի մեջ	մեկ տուփի դրամ	% գնի մեջ	մեկ զույգ դրամ	% գնի մեջ	մեկ կվտժ դրամ	% գնի մեջ
1	2	3	4	5	6	7	8	9
1. Արտադրական ծախսեր "C"	642.4	53.5	75.0	34.8	8944.5	59.6	17.28	69.1
1.1Նյութական ծախսեր	489.6	36.6	68.4	31.7	6664.5	44.4	1.95	7.8
1.2 Ամորտիզացիոն մասհանումներ	85.2	7.1	3.4	1.6	255	1.7	0.65	2.6
1.3 Էլեկտրաէներգիայի և վառելիքի գնման ծախսեր	60.8	5.1	1.0	0.5	495	3.3	8.7	34.8
1.4 Այլ արտադրական և իրացման ծախսեր	56.8	4.7	2.2	1.0	1530	10.2	5.98	23.9
2. Աշխատանքային ծախսումներ. "V"	177.6	14.8	5.2	2.4	2055	13.7	2.88	11.5
2.1 Աշխատավարձի վճարում	148.8	12.4	3.8	1.8	1500	10	2.25	9
2.2 Հատկացումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամին	28.8	2.4	1.4	0.6	555	3.7	0.63	2.5
3. Զուտ եկամուտ. "M"	380	31.7	135.3	62.8	4000.5	26.7	4.84	19.4
3.1 Հիմնական գործունեությունից ստացված շահույթ (վնաս)	180	15	9.6	4.4	1500	10	0.67	2.7
3.2 Ակցիզային հարկ	–	–	89.8	41.7	–	–	–	–
3.3 ԱԱՀ	200	16.7	35.9	16.7	2500.5	16.7	4.17	16.7
4. Իրացման գին	1200	100	215.5	100	15000	100	25	100

Աղյուսակում բերված ապրանքների մեկ միավորի շուկայական գների մեջ պարզ երևում են արտադրական ծախսերի, աշխատանքային ծախսումների և զուտ եկամտի բացարձակ ու հարաբերական մեծությունները: Դրանք հիմք են ինչպես արդյունքի գների կառուցվածքի և մեծության ձևավորման, այնպես էլ նույն չափանիշներով և ձևավորման կառուցվածքով բաշխման համար:

Գների միջոցով արդյունքի բաշխումն իր մեջ պարունակում է երկու հիմնական պահ: Առաջին՝ արդյունքն արժեքային ձևով բաշխվում է այն ձևավորող առանձին խմբերի, տարրերի ու ենթատարրերի միջև և երկրորդ՝

դինը հիմք է ՀԱԱ-ի տարբեր սուբյեկտների ու տնտեսական շրջանների միջև՝ բնաիրային ձևով և՛ շարժման, և՛ բաշխման համար:

Ֆինանսների ու գների օրգանական կապն ու փոխներգործությունն արտացոլվում են հատկապես արժեքի բաղադրման ընթացքում այն ձևավորող ու կառուցվածքի մասերը հանդիսացող խմբերի և տարրերի միջև: Հետևաբար՝ արտադրության գործընթացի հենց սկզբից արդեն հայտնի են գինը ձևավորող այն բոլոր տարրերը, որոնք միաժամանակ հիմք են բաշխման համար:

Ապրանքի արտադրության համար անհրաժեշտ արտադրական և աշխատանքային ծախսումները (հումք, նյութեր, հիմնական միջոցների ամորտիզացիա, էլեկտրաէներգիա, աշխատուժ և այլն) նոր ստեղծվող արդյունքին փոխանցվում են իրենց գներով կամ պետության կողմից սահմանված կարգով: Իսկ զուտ եկամուտը, շահույթը, ուղղակի և անուղղակի հարկերը, ոչ հարկային վճարումները հաշվարկվում են շուկայի կողմից թելադրված պայմաններով (շուկայական առաջարկի և պահանջարկի փոխհարաբերությունը ուղղակի ձևով ներգործում է գնի և նրա տարբը հանդիսացող շահույթի մեծության վրա) և պետության սահմանած կարգով՝ համաձայն հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների և այլ ՀՀ օրենքների[1]:

Գինը և ֆինանսները զուգահեռաբար և հետևողականորեն իրագործում են ՀԱԱ-ի և ազգային եկամտի բաշխումն ու վերաբաշխումը: Գների կառուցվածքում հիմնական խմբերը, գնից առանձնանալով, ենթարկվում են սկզբնական բաշխման (աղյուսակ I. 1, 2, 3 կետեր): Այնուհետև տեղի է ունենում բաշխման հաջորդ փուլը, որտեղ C-ից, V-ից և M-ից առանձնանում են ղրանցում ընդգրկված տարրերն ու ենթատարրերը:

Եթե բաշխման առաջին փուլում C-ի և V-ի առանձնացումը գնից տեղի է ունենում գների մեխանիզմների միջոցով, ապա M-ի առանձնացումը, ինչպես նաև C-ի և V-ի վերաբաշխումն այն ներառող տարբեր տարրերի միջև՝ ֆինանսների օգնությամբ՝ բաշխման մեխանիզմների միջոցով: Բաշխման այդ փուլում C-ից առանձնանում են պարզ վերարտադրությանը և պարզ ֆինանսական հարաբերությունների ապահովմանն ուղղված շրջանառու միջոցները, ամորտիզացիոն ֆոնդը և այլն, իսկ V-ից՝ աշխատավարձի ֆոնդը, սոցիալական հիմնադրամին մասհանումները, աշխատավարձից՝ եկամտահարկը և այլն: Դրանք տեղի են ունենում պետության կողմից սահմանված համապատասխան ֆինանսական մեխանիզմների միջոցով (նորմեր, տոկոսադրույք, հարկային և ոչ հարկային վճարներ, դրույքաչափեր, արտոնություններ և այլն): Այդ ընթացքում արդյունքի բաշխմանն անմիջապես հաջորդում է արդյունքի վերաբաշխումը տնտեսավարող սուբյեկտների ներսում, տնտեսավարող սուբյեկտների, պետության և բանկերի միջև՝ ապահովելով ինչպես պարզ, այնպես էլ ընդլայնված ֆինանսական հարաբերություններ:

Եթե գների մեխանիզմների միջոցով տեղի է ունենում ՀՆԱ-ից C+V-ի առանձնացում, ապա վերաբաշխողական հարաբերությունները սկսվում են ՀՆԱ-ից զուտ եկամտի (M) առանձնացումով և վերաբաշխումով: M-ից շահույթի զգալի մասը, ֆինանսական մեխանիզմների միջոցով գնից

---

[1] ՀՀ կառավարության 1992թ. ապրիլի № 238 որոշումով սահմանված են ամորտիզոյան մասհանումների նորմերը և կարգը, 1997թ. դեկտեմբերի 30-ի օրենքով պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների չափը և կարգը, 1998թ. օգոստոսի 25-ի № 525 որոշումով արտադրական ծախսերը հիմնավորող նորմերը և հաշվառման կարգը: Տե՛ս ՀՀ հարկային տեղեկատու, 1993, № 2, 1998, № 27:

[2] Տե՛ս ՀՀ հարկային օրենսդրություն, Ե., 1998:

առանձնանալով, վերադառնում է արտադրություն և, միանալով C+V-ին, աղբյուր է դառնում ընդլայնված վերարտադրության համար: Իսկ մյուս մասը[3] ավելացված արժեքի և ակցիզային հարկերի հետ միասին մտնում է պետական բյուջե՝ աղբյուր դառնալով հասարակական վերարտադրության, ինչպես նաև պետական, սոցիալական և այլ կարիքների բավարարման համար:

Այսպիսով դեռ արտադրության գործընթացի սկզբից էլ պետությունը, տնտեսավարող սուբյեկտները և շուկան պետական ֆինանսական, հարկային, ոչ հարկային և շուկայական զնագոյացման մեխանիզմների միջոցով արդեն որոշել են ապրանքի զինը և կառուցվածքը՝ նախօրոք կանխորոշելով արդյունքի բաշխման հարաբերակցությունը, հաջորդականությունը և ուղղությունը:

Այս գործընթացում ֆինանսական հարաբերությունները ընդգրկում են բաշխողական և վերաբաշխողական հարաբերությունների ամբողջությունը և ֆինանսական մեխանիզմների միջոցով ակտիվ ներգործում են ՀՆԱ-ի բաշխման և վերաբաշխման վրա: Այստեղ տեղի է ունենում ֆինանսական հարաբերությունների նյութականացում, որն իր դրսևորումն է գտնում ինքնարժեքի, զուտ եկամտի տարրերի, ֆինանսական ռեսուրսների մեջ և հակառակը՝ ֆինանսական ռեսուրսների ձևավորումը սկսվում է զների տարրերով ինքնարժեքով և զուտ եկամտով:

Այսպիսով զինը հասարակական ամբողջական արդյունքի բաշխման հիմքն է և սկիզբը այն պարզ հետևությամբ, որ այնտեղ ընդգրկված են արժեքի ձևավորման ու բաշխման բոլոր բաղադրամասերը: Նախ՝ զների միջոցով իրագործվում է ՀՆԱ-ի և ազգային եկամտի բաշխումը նրա հիմնական տարրերի միջև, որտեղ զուտ եկամուտը, որպես զնի հիմնական տարր, բաշխման առաջին փուլում հանդես է գալիս որպես ֆինանսական հարաբերությունների սկզբնաղբյուր: Երկրորդ՝ զուտ եկամտից շահույթի մի մասը, որպես զների միջոցով ՀՆԱ-ի իրացման արդյունք, վերադառնում է արտադրություն և, արտադրական ծախսերին միանալով, հիմք է դառնում արդյունքի վերարտադրության համար, դրանով արտադրությանը տալով նոր որակ: Երրորդ՝ զուտ եկամտի մյուս մասը հարկային և ոչ հարկային վճարումների ձևով ուղղվում է բյուջետային և արտաբյուջետային ֆոնդերը, վերածվում է ֆինանսական ռեսուրսների և նախասկիզբ է հանդիսանում ՀՆԱ-ի՝ հասարակական մասշտաբով վերաբաշխման համար:

Տնտեսության մեջ ֆինանսական միջոցների բաշխումը և վերաբաշխումը տեղի են ունենում ֆինանսական բաշխողական և վերաբաշխողական մեխանիզմների միջոցով: Դրանք հիմնականում երկուսն են. զների միջոցով բաշխման կարգավորում և կենտրոնացված դրամական ֆոնդերից ուղղակի ֆինանսավորում:

Գների միջոցով արդյունքի բաշխման կարգավորումը պետությունն իրագործում է ուղղակի և անուղղակի եղանակներով: Առաջինի դեպքում պետությունն ուղղակիորեն սահմանում է զենաշնորհային ապրանքների, ծառայությունների, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում մարդու համար խիստ անհրաժեշտ կամ կենսական նշանակության որոշ ապրանքների զները և ծառայությունների սակագները, որը կարող է հանգեցնել զների կառուցվածքի և զների միջոցով ֆինանսական բաշխման փոփոխությունների:

Գների միջոցով արդյունքի բաշխման անուղղակի կարգավորումը իրականացվում է զների հարկային և ոչ հարկային վճարումների, ինքնարժեքի

[3] Նույն տեղում:

մեջ մտնող ծախսերի և ծախսումների դրույքաչափերի միջոցով, որոնք կարող են բերել գների փոփոխության: Եթե գների միջոցով ֆինանսական բաշխման ուղղակի և անուղղակի կարգավորումը հանգեցնում է գների մասսաբերության կամ բարձրացման, ապա պետությունը բյուջետային ուղղակի ֆինանսավորման (ավելացում, կրճատում) կամ ֆինանսական մեխանիզմների միջոցով կարգավորում է տյդ տարբերությունը՝ հատկացնելով վերարտադրության անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Օրինակ՝ 1997 և 1998թթ. ՀՀ-ում դյուղմթերքների և հացի գների ավելացված արժեքի հարկի կիրառումը հանգեցրեց գների բարձրացման, ինչպես նաև՝ դրանց կառուցվածքի և ֆինանսական բաշխման փոփոխության: Կամ 1999թ. հունվարի 1-ից մեկ կվտժ (մինչև 250 կվտժ սպառված) էլեկտրաէներգիայի սակագնի թանկացումը հանգեցրեց գների կառուցվածքի և ֆինանսական բաշխման էական փոփոխության: Այն ուղղված էր ճյուղի վերարտադրության և պետական բյուջեին լրացուցիչ մուտքերի մուտքագրմանը (տե՛ս աղյուսակ II):

Աղյուսակ II

Մինչև 250 կվտժ էլ.էներգիայի սպառման 1 կվտժ սակագնի հաշվարկման ցուցանիշները	Տարիներ				Տարբերություն ավելացում + նվազում –	
	1998թ. փաստ	% 1կվտժ սակագնի մեջ	1999թ. պլան	% 1կվտժ սակագնի մեջ	դրամ (4–2)	% (5–3)
1	2	3	4	5	6	7
1.Արտադրական ծախսեր	13.28	69.2	17.1	68.4	+ 3.82	– 0.8
1.1 Վառելիքի գնման ծախսեր	6.91	36	7.52	30.1	+ 0.51	+ 0.3
1.2 Այլ նյութական ծախսեր	1.44	7.5	1.95	7.8	+ 0.51	+ 0.3
1.3 Վերանորոգում և ամորտ. մասհանումներ	4.2	21.9	6.33	25.3	+ 2.13	+ 3.4
1.4 Կորուստներ, այլ արտադրական ծախսեր և իրացում	0.73	3.8	1.3	5.2	+ 0.57	+ 1.4
2.Աշխատանքային ծախսումներ	2.4	12.5	3.06	12.2	+ 0.66	– 0.3
2.1 Աշխատավարձ	1.77	9.2	2.25	9	+ 0.48	– 0.2
2.2 Սոց. ապ. հատկացում	0.63	3.3	0.81	3.2	+ 0.18	– 0.1
3. Զուտ եկամուտ	3.51	18.3	4.84	19.4	+ 1.33	+ 1.1
3.1 Հիմնական գործունեությունից ստացված շահույթ (մնաց)	0.31	1.6	0.67	2.7	+ 0.36	+ 1.1
3.2 ԱԱՀ	3.2	16.67	4.17	16.67	+ 0.97	–
4. Սակագին (1+2+3)	19.19	100	25	100	+ 5.81	–

Աղյուսակ II-ի վերլուծությունից երևում է, որ 1 կվտժ էլեկտրաէներգիայի սակագնի 5.81 դրամով թանկացումը ապահովելու է էներգահամակարգի՝ 16558.5 մլն դրամ տարեկան լրացուցիչ հասույթի առաջացումը (այն կարելի է հաշվարկել ստորև բերված բանաձևով) և սակագների միջոցով արդյունքի բաշխման կառուցվածքային փոփոխությունը:

$$Հ = ՍԹ. \times Ա.ծ(կվտժ) \times ԱԹ \times ԸԹ,$$ որտեղ՝

Հ – տարեկան հասույթի ավելացում
ՍԹ. – 1 կվտժ սակագնի թանկացում (5.81 դրամ)
Ա.ծ. – մեկ աբոնենտի զեղչով սպառումը (250կվտժ՝ ամսական)
ԱԹ. – ամիսների թիվը (12)
ԸԹ. – սպառողների թիվը (950 հազար բաժանորդ)

Սակագնի վերոհիշյալ փոփոխությունները հանգեցրին արտադրական ծախսերի՝ այդ թվում ամորտիզացիոն մասհանումների ավելացման (համապատասխանաբար՝ 10 887 և 6 070.5 մլն դրամ), աշխատանքային ծախսումների, այդ թվում սոց. ապահովագրության հիմնադրամի մասհանումների բարձրացման (1 881 և 513 մլն դրամ) և զուտ եկամտի (3 790.5 դր.), ինչպես նաև բյուջետային եկամուտների աճի՝ 3 482.3 մլն դրամ (եկամտահարկ՝ 410, շահութահարկ՝ 307.8 և ավելացած արժեքի հարկ՝ 2 764.5 մլն դրամ):

Սակագների միջոցով արդյունքի բաշխման վերոհիշյալ փոփոխություններն իրենց հերթին առաջ բերեցին բյուջետային ֆինանսավորման փոփոխություններ: Այն է՝ 1999թ. կրճատվեցին ՀՀ էներգահամակարգին բյուջեից հատկացվող միջոցները՝ 6 071.5 մլն դրամով[4] և հակառակը՝ 300 հազար անապահով ընտանիքների հատկացվեցին նպաստներ՝ 5 220 մլն դրամի չափով (մեկ ընտանիքին՝ ամսական 1 450 դրամ):

Այսպիսով գների փոփոխությունն առաջ բերեց կառուցվածքային և արդյունքի բաշխման, վերջինս էլ իր հերթին՝ կենտրոնացված դրամական ֆոնդերի վերաբաշխման փոփոխություններ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որքան մեծ է պետության ֆինանսական բաշխողական մեխանիզմների բացարձակ ու հարաբերական ներգործությունը, այնքան թույլ է շուկայի տարերային կարգավորիչ դերը՝ գնագոյացման գործընթացում: Դա էապես ազդում է արժեքի օրենքի գործողության, գների մեջ շահույթի ձևավորման, ավանսավորված կապիտալի նկատմամբ շահութաբերության մեծության, փողի գնողունակության վրա և այլն:

Այս պարագայում կարևոր նշանակություն ունեն ֆինանսական և գների մեխանիզմների կատարելագործումն ու ներդաշնակ զարգացումը: Դրանց էական շեղումները ներգործում են արդյունքի բաշխման մյուս ձևերի՝ աշխատավարձի, վարկի, շուկայի և ՀՆԱ-ի բաշխման և ֆինանսական հարաբերությունների վրա:

Պետության ֆինանսական քաղաքականությունը միշտ պետք է ուղղված լինի գների միջոցով արդյունքի բաշխման ֆինանսական մեխանիզմների կատարելագործմանը: Հավասարակշռված ֆինանսական քաղաքականությամբ կարելի է հասնել գնագոյացման բոլոր գործոնների համամասնական և հաշվեկշռված զարգացման: Նման իրավիճակում պետությունը ֆինանսական մեխանիզմների միջոցով սկսում է կարգավորել գների մեջ զուտ եկամուտը[5],

---

[4] Տե՛ս ՀՀ 1998 և 1999 թթ. պետական բյուջեի եկամուտների և ծախսերի կառուցվածքը: Հարկային տեղեկատու, № 22 և 30:

[5] Նկատի ունենք պետության կողմից հարկերի և այլ պարտադիր վճարների միջոցով արհեստականորեն պառաջացած զուտ եկամուտը, որը ՀՀ-ում բնակչության մեկ շնչին ընկնող միջին եկամուտների համեմատությամբ ունի մեծ խզում:

ինքնարժեքից՝ հարկերն ու մասհանումները և այլն, դրանով միաժամանակ ասպարեզ տալով աղատ շուկայական հարաբերությունների զարգացմանը:

Աղյուսակ 1-ում բերված մեկ միավոր ապրանքի գնի զուտ եկամուտը կազմում է՝ մսինը՝ 31.7, ծխախոտինը՝ 66, կոշիկինը՝ 26.7, էլեկտրաէներգիայինը՝ 19.4 տոկոս: Դրանք միասին ու միջինացված կազմում են 27.6 տոկոս:

Բացի նշվածից, որպես գնի ենթատարրեր, նյութական ծախսերի մեջ ընդգրկված են հողի, դույքի, էկոլոգիայի, ճանապարհային հարկերի և այլ պարտադիր վճարումներ, որոնք մեր օրինակում առանձին արտացոլված չեն, սակայն միջինացված կազմում են 0.4 - 0.5 տոկոս:

Աշխատանքային ծախսումների մեջ եկամտահարկը, սոցիալական ապահովագրության համար մասհանումները գնի մեջ կազմում են 2.5 և 3.7 տոկոս:

Նշված հարկերը և ոչ հարկային վճարումները չնայած մտնում են ինքնարժեքի մեջ, սակայն գնից առանձնանալով, աղբյուր են բյուջետային և արտաբյուջետային ֆոնդերի ձևավորման և իրենց բնույթով առաջ են բերում ֆինանսական հարաբերություններ: Գների մեջ թվարկված շահույթը, հարկերը, պարտադիր և ոչ հարկային վճարները միասին և միջինացված կազմում են 34 - 35 տոկոս: Դրանք Վրաստանի, Ղազախստանի, Ուկրաինայի, Էստոնիայի ու Մոլդովայի համեմատությամբ բարձր են 3 - 5 կետով և խիստ անհամեմատական են գների մեջ անվանական աշխատավարձի (10.1%) և հանրապետության մեկ շնչին ընկնող միջին տարեկան եկամուտների մակարդակին[6]:

Հետևաբար, դինը որպես արդյունքի բաշխման առանձնահատուկ ձև, արտադրության ծախսերի փոխհատուցման և զուտ եկամտի ձևավորման ընթացքում տնտեսավարող սուբյեկտներին և պետությանը պետք է հարկադրի արտադրության վրա կատարած ծախսումների և զուտ եկամտի համեմատական վերբաշխության միջոցով հետևել ապրանքի արժեքի, գնի և ժողովրդի միջին եկամուտների համամասնական զարգացմանը: Վերջինիս անտեսումը հանգեցնում է ՀԱԱ-ի բաշխման բևեռացման, տնտեսության քայքայման, շուկայական պահանջարկի ու առաջարկի անհամապատասխանությունների, արտադրական ուժերի թերբեռնվածության, գործազրկության, ազգային դրամի արժեզրկման, աշխատավարձի բացարձակ ու հարաբերական անկման և դրանցից բխող բացասական հետևանքների: Այդ մասին են վկայում ԽՍՀՄ-ի և ուրիշ սոցիալիստական երկրների համակարգերի քայքայումը և մեր հանրապետությունում 1991 թվականից ի վեր տիրող տնտեսական, սոցիալական և քաղաքական ճգնաժամը: Նման պայմաններում գնագոյացման և բաշխման հարաբերությունների կարգավորումը պետությունը որոշ ժամանակ պետք է վերցնի իր ձեռքը և ֆինանսական մեխանիզմների միջոցով սկսի կարգավորել գներն ու սակագները, ինչպես նաև՝ արդյունքի բաշխման հարաբերությունները: Այս մոտեցումը հնարավորություն կընձեռի գները

---

[6] 1998թ. անտեսավարող սուբյեկտներում զբաղված մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձը կազմում էր 17 170, բյուջետայինը՝ 9 934 և բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտը (մարդասիրական օգնությունը ներառյալ) ամսական 11 358 դրամ (ՀՀ Վիճ. նախարարության տվյալներով):

հասցնել հասարակականորեն հավասարակշռված արդյունավետության աստիճանի և ժողովրդի գնողունակության միջին մակարդակի:

Այսպիսով, ֆինանսական մեխանիզմների հիմնախնդիրները և դրանց միջոցով բաշխողական հարաբերությունների զարգացումը անցումային շրջանում անհրաժեշտ է ուղղել ոչ միայն ֆիսկալ՝ բյուջեն համալրելու նպատակներին, այլև հնարավորություն ստեղծել խթանելու հանրային տնտեսական և սոցիալական վերարտադրությունը:

ЗАДАЧИ ФИНАНСОВЫХ МЕХАНИЗМОВ ПРИ РАСПРЕДЕЛЕНИИ ВАЛОВОГО ПРОДУКТА ПОСРЕДСТВОМ ЦЕН

А.Ш. БАГДАСАРЯН

Резюме

Коренные изменения форм собственности и рыночные отношения привели к необходимости пересмотра ранее действующих способов и методов распределения ВНП.

Распределение продукта осуществляется не только финансами, но и посредством цен. Формирование и разделение цены на отдельные составляющие и распределение их между хозяйствующими и другими субъектами являются началом и основой финансовых взаимоотношений. В этом вопросе важную роль играют финансовые механизмы.

На основании анализа проведенных исследований можно предложить некоторые направления усовершенствования финансовых механизмов распределения ВНП посредством формирования цен. Это имеет большое значение для обеспечения воспроизводства и развития национальной экономики.